# ՀՍԿԻՐ ՔՈ ՍԻՐՏԸ

## GUARD YOUR HEART

### ԳՈՐԾ. 5:1-11

---

## ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

**Գործ. 4:32-37 - 32** Եւ հավատացյալների բազմությունը մէկ սիրտ ու մէկ հոգի էր:
Եւ նրանցից ոչ ոք չէր ասում իր ստացուածքի մէկի համար՝ թէ իրանն է. այլ ամէն
ինչ նրանց համար հասարակաց էր: 33 Եւ առաքյալները մեծ զօրությունով
վկայութիւն էին տալիս Տէր Հիսուսի հարության համար. եւ մեծ շնորհք կար
նորանց ամենի վրա: 34 Որովհետեւ նորանց մէջ ոչ ոք մի բանի կարօտ չէր,
որովհետեւ, ովքեր ագարակների կամ տների տէր էին, վաճառում էին դրանք եւ
վաճառուածի գումարը բերում , 35 ու դնում էին առաքեալների ոտքերի առաջ, եւ
նրանք բաշխում էին յուրաքանչյուրին՝ ում ինչքան պէտք էր լինում: 36 Հովսէփը,
որ Ղեւտացի էր, ծագումով՝ կիպրացի, որը առաքեալներից Բառնաբաս կոչուեց (որ
թարգմանւում է մխիթարութեան որդի), մի արտ ունէր. 37 նա վաճառեց այն եւ
գումարը բերեց դրեց առաքեալների ոտքերի առաջ:

***Հով. 13:34-35 - 34** Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց. ինչպէս
ես ձեզ սիրեցի, դուք էլ միմեա՛նց սիրեցէք: 35 Եթէ դուք միմեանց սիրէք,
դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն էք:*

**Գործ. 5:1-11 - 1** Եվ Անանիա անունով մի մարդ, իր կնոջ՝ Սափիրայի հետ
միասին, մի ագարակ վաճառեց: 2 Եւ նրա գումարից մի մաս կնոջ գիտութեամբ (որ
կինն էլ գիտէր.) թաքցրեց եւ միւս մասը բերեց դրեց առաքեալների ոտքերի առաջ: 3
Պետրոսն ասաց. «Անանիա՛, ինչո՞ւ սատանան **<u>լցրեց քո սիրտը</u>**, որ դու ստէիր
Սուրբ Հոգուն եւ ագարակի գումարից թաքցնէիր. 4 Չ՞է որ քանի կար, քոնն էր այն,
եւ վաճառելիս՝ քո տնօրինութեան տակ էր. ինչպէ՞ս եղավ, որ քո **<u>սրտի մէջ</u>** այս
բաները դրեցիր. մարդկա՛նց չստեցիր, այլ՝ Աստծուն»: 5 Եւ Անանիան, այս
խօսքերը լսելով, ընկավ եւ շունչը փչեց. եւ մեծ վախ ընկաւ բոլոր նրանց վրա, որ
այս բանը լսեցին: 6 Երիտասարդները ոտքի ելան, պատանքեցին նրան ու տարան
թաղեցին: 7 Եւ շուրջ երեք ժամ անցավ. եւ նրա կինը, որ չգիտէր, թէ ինչ էր եղել,
ներս մտավ: 8 Պետրոսը նրան դիմեց եւ ասաց. «Ասա՛ դու ինձ, այդչա՞փ գնով
ագարակը վաճառեցիք»: Եւ նա ասաց. «Այո՛, այդչափ»: 9 Եւ Պետրոսը նրան ասաց.
«Ինչի՞ համար է, որ դուք **միաբանեցիք** փորձելու համար Տիրոջ Հոգին. ահա այն

մարդիկ, որ թաղեցին քո ամուսնուն, դռան մօտ են. քեզ էլ դուրս կը հանեն»: 10 Եւ
նա իսկոյն ընկաւ նրա ոտքերի առաջ եւ շունչը փչեց: Երիտասարդները ներս
մտան եւ նրան մեռած գտան. եւ հանեցին թաղեցին իր ամուսնու մօտ: 11 Եւ մեծ
վախ ընկավ ամբողջ եկեղեցու ու բոլոր նրանց վայ, որ այս բանը լսեցին:

- **Գործ. 1:14 -** 14 Սորանք ամենքը միշտ միաբան աղօթք եւ աղաչանք էին անում…
- **Գործ. 2:1 -** 1 Եւ երբոր Պենտէկոստէի օրերը լրացան, ամենքը միաբան մէկտեղ էին:
- **Գործ. 2:46 -** 46 Ամեն օր միաբանութեամբ տաճարումն էին լինում, եւ հաց էին կտրում տներում, եւ ուրախութիւնով եւ սրտի միամտութիւնով կերակուր էին ուտում.
- **Գործ. 4:24 -** 24 Եւ նորանք երբոր լսեցին, միաբանութեամբ իրանց ձայները բարձրացրին դէպի Աստուած եւ ասեցին.

## I. ԵԹԵ ՄԵՂՔ ՈՒՆԵՍ ՈՒ ՉԵՍ ՉԶՂՋՈՒՄ ԴՐԱ ՀԱՄԱՐ, ԱՅՆ ՎՆԱՍՈՒՄ Է ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ:

**UNREPENTANT SIN DISRUPTS UNITY.**

**Ու՞մ միջոցով** — Եվ Անանիա անունով մի մարդ, իր կնոջ՝ Սափիրայի հետ միասին, մի ագարակ վաճառեց: 2 Եւ նրա գումարից մի մաս **կնոջ ամբողջ գիտությամբ (full knowledge)** թաքցրեց եւ միյուս մասը բերեց դրեց առաքեալների ոտքերի առաջ:

**Միասնությունը չի նշանակում միաձայն համաձայնություն.**

**1 Հով. 1:8 -** 8 Եթէ ասենք թէ մեղք չ'ունենք, մեր անձերը խաբում ենք եւ ճշմարտություն չ'կա մեզանում: 10 Եթէ ասենք թէ մեղք չ'գործեցինք, ստախօս ենք անում **նորան**, եւ **նորա** խօսքը մեր մեջ չէ:

«Անանիա՛, ինչո՞ւ սատանան **լցրեց քո սիրտը**, որ դու ստէիր Սուրբ Հոգուն եւ ագարակի գումարից **թաքցնէիր.** 4 Չ՞է որ քանի կար, քոնն էր այն, եւ վաճառելիս՝ քո տնօրինութեան տակ էր. ինչպէ՞ս եղավ, որ քո **սրտի մէջ** այս բաները դրեցիր. մարդկա՛նց չստեցիր, այլ՝ Աստծուն»:

**Առակաց 4.23-ը հորդորում է.** «Ամեն ինչից առավել, հսկիր քո սիրտը»: **Ինչո՞ւ:** Որովհետև դրանից են բխում կյանքի աղբյուրները:

«Արթուն կերպով հսկեք ձեր սիրտը. այդտեղից է, որ կյանքը սկիզբ է առնում»: («Ուղերձ» Աստվածաշունչ, MSG)

Ո՞վ է պատասխանատու այն հսկելու համար (_______________): Ձեր անունը

Robert Douglas — Յուրաքանչյուրը ինքն է հսկում իր սիրտը (պահպանում է իր սիրտը կամ պատասխանատվություն է կրում դրա համար): Այն, ինչ բխում է մարդու կյանքից, կորոշվի նրանով, թե որքան լավ կամ վատ է մարդը պահպանում իր սիրտը կամ ներքին էությունը:

## II. ԵԹԵ ՄԵՂՔ ՈՒՆԵՍ ՈՒ ՉԵՍ ԶՂՋՈՒՄ ԴՐԱ ՀԱՄԱՐ, ԱՅՆ ՎՆԱՍՈՒՄ Է ԸՆՏԱՆԻՔԸ:

### UNREPENTANT SIN DISRUPTS FAMILY

5 Եւ Անանիան, այս խօսքերը լսելով, ընկաւ եւ շունչը փչեց.
10 Եւ Սափիրան իսկույն ընկավ նրա ոտքերի առաջ եւ շունչը փչեց:

**Հռ. 6:23 -** 23 Որովհետեւ մեղքի վարձքը մահն է. բայց Աստուծո շնորհքը՝ հավիտենական կյանք՝ մեր Տէր Հիսուս Քրիստոսի ձեռով:

***Ըստ Bonhoeffer- ի, ոչ լիովին շնորհքի ընդունումը նշանակում է քարոզել ներման մասին առանց ապաշխարություն պահանջելու, մկրտություն առանց գիտակցության, հաղորդություն առանց խոստովանության: Ոչ լիովին շնորհքի ընդունումը շնորհք է առանց խաչի, առանց Յիսուս Քրիստոսի, որն էլ պատճառ կդառնա մարմնավոր կյանք վարելու:***

**Հռ. 5:2 -** 2 …ընդունեցինք հավատքով այս <u>շնորհքի մէջ մտնելն էլ</u>, որ նորանում <u>կանգնած ենք</u>…

## III. ԵԹԵ ՄԵՂՔ ՈՒՆԵՍ ՈՒ ՉԵՍ ԶՂՋՈՒՄ ԴՐԱ ՀԱՄԱՐ, ԱՅՆ ՎՆԱՍՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻՆ:

### UNREPENTANT SIN DISRUPTS COMMUNITY.

**Յեսու 7:1** — Բայց իսրայէլացիները հանցանք գործեցին եւ գողացան նզովուած բաներից: Հուդայի ցեղից Աքարը, առավ նզովուած բաներից, եւ Տէրը սաստիկ բարկացավ իսրայէլացիների վրա:

> 13 «Իսրայէլացինե՛ր, նզովք կա ձեր մէջ, դուք չէք կարող կանգնել ձեր թշնամիների առաջ, մինչեւ որ նզովքը ձեր միջից չվերացնէք:

**Ու՞մ միջոցով** — 9 Հեսուն Աքարին ասաց. «Որդեա՛կ իմ, փա՛ռք տուր այսօր Իսրայէլի Տէր Աստծուն, խոստովանի՛ր եւ պատմի՛ր ինձ, ինչ որ արեցիր, եւ մի՛ **թաքցրու** ինձնից»: 20 Աքարը պատասխան տուեց եւ ասաց Հեսուին.

«Արդարեւ, ես մեղք գործեցի Իսրայէլի Տէր Աստծու առաջ եւ այս բանը արեցի. 21 ավարի մէջ տեսա մի գեղեցիկ **նկարազարդ** վերարկու, երկու հարիւր սիկղ արծաթ եւ մի ձուլակտոր ոսկի, որի ծանրութիւնը հիսուն սիկղ էր, սաստիկ ցանկացա եւ առա դրանք։ Ահա դրանք **թաքցուած են** հողի տակ իմ վրանում, իսկ արծաթը **թաքցուած է** դրանց տակ»։

## ԱՄՓՈՓՈՒՄ

I. **ԵԹԵ ՄԵՂՔ ՈՒՆԵՍ ՈՒ ՉԵՍ ԶՂՋՈՒՄ ԴՐԱ ՀԱՄԱՐ, ԱՅՆ ՎՆԱՍՈՒՄ Է ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ։**
II. **ԵԹԵ ՄԵՂՔ ՈՒՆԵՍ ՈՒ ՉԵՍ ԶՂՋՈՒՄ ԴՐԱ ՀԱՄԱՐ, ԱՅՆ ՎՆԱՍՈՒՄ Է ԸՆՏԱՆԻՔԸ։**
III. **ԵԹԵ ՄԵՂՔ ՈՒՆԵՍ ՈՒ ՉԵՍ ԶՂՋՈՒՄ ԴՐԱ ՀԱՄԱՐ, ԱՅՆ ՎՆԱՍՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻՆ։**